ԳԼՈՒԽ Ժ ԻՇԽԱՆԱՁԱՆՑ ԺՈՂՈՎ ՄԸ

Հասաւ դարձեալ Երասխայ ափանց վրայ, որ դարիւ-դարիւ կ'ուգար իւր խրոխտ ընթացիւք, սիրտը այնչափ տխուր էր, որ առաջ քան անցնիլը նստաւ ճանապարհեն հեռու նոյն ափանց վրայ. ի՛նչ կը մտածէր այդ մարդը, որ քսանչորս ժամը անցէր՝ բերանը բան չէր դրած ուտելու եւ ոչ ախորժ ունէր:

Այդ Երասխայ դիմացի գետեզրը, Բագարանէ շատ վար՝ փոքրիկ վանք մը կը տեսնէր, ճիշտ նոյն միջոցին ուր Ախուրեան Երասխ կը թափէր եւ իր աչքը անկից չէր կարող բաժնել. այդ վանքը երկու երկայն տարիներ իրեն բանտ էր եղած, կը նայէր այդ աշտարակին ուր կը յիշէր թէ անքուն գիշերներ անցուցեր էր, կը տեսնէր այն փոքրիկ երկաթապատ լուսամուտի, ուսկից առանց երկաթի արգելքին դարձեալ մարդ չէր կրնար անցնիլ, ծակը ուսկից շնորհեալ էր տեսնել երկինք իւր պայծառութեան եւ իւր տխրութեանց մէջ, երբ իր սրտին այն օրերէն սկսեալ մինչեւ սոյն այս վայրկեան օր մը ուրախութեան արեւ չէր ծագած քսան-քսանհինգ տարիներու ժամանակ: Եւ որ աւելին է կը յիշէր այն սրտի համար սոսկալի վայրկեանները, որ չարչարանաց երկար տարիներ էին, հորում հոգին կը տոչորէր եւ նորա տանջանքները բացատրելու համար չի կար բառ վասնզի մարդկային լեզուն շատ աղքատ է յայտնելու այո վիճակը, եւ նա միայն կը զգայ, որ սիրէր է անյոյս, որ սիրէր է թշուառ եւ որ խնդրէր է հաստուծոյ հազար բիւր անգամ ազատել զինք ի սիրոյ եւ ի կենաց, որուն երկնային քաղցրութիւնը դառնացուցեր լափլիզէր է բաժանման եւ անյուսութեան դժոխային հուրը: Կը յիշէր այն տխուր գիշերներու անհանգիստ քունը, ուր հրեշտակային եւ պաշտելի կերպարանքը Վասկանուշին կ'երեւար փայլակի մը պէս, եւ խեղճ բանտեալն հազիւ աչքերը յագեցնել փափագէր՝ աներեւոյթ կը լինէր եւ ինք խոտէ խշտուոյն վրայ ամբողջ ժամեր կը տապլտկէր: Վերջապէս յոգնած այդ յիշատակն երէն ձեռքը ակամայ ճակտին դրաւ մէկդի վանելու համար ամէն խորհրդածութիւն, թէպէտ այնչափ տարիներէ վերջը սրտի սպիացեալ վէրքը ձայն կ'ուտար թէ չէր